

№-45

ԿՐՈ. Շ. ԽՈՎԻԿԵՐԵՎՈՅԻ ՀԱՄԱՐՆԱԳՐԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՀԱՅՐԱԿԱԿԱՆ

ՀՀ ԳԱԱ ՀՐ. ԱՃԱՋՅԱՆԻ ԱՆՎԱՆ ԼԵԶՎԱԲԱՆՈՒԹՅԱՆ ԻՆՍԻՏՈՒՏԻ
ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՄԱՆ

ԺՈՂՈՎՐԴՅԱՆ

ՈՍԿԱՆՅԱՆ ՎԱՐԴԱՆ ՍՏԵՓԱՆԻ

ՀԱՅ-ՔՈՇԱՆԵՐԻ ԳԱՂՏՆԱԼԵԶՈՒՆ
Պատմահամեմատական ուսումնասիրություն

Ժ.02.06 «ԱՍԻԱՑԻ ՀԻՆ ԵՎ ՆՈՐ ԼԵԶՈՒՆԵՐ (իրանազիտություն)»
մասնագիտությամբ բանասիրական գիտությունների թեկնածուի գիտական
աստիճանի հայցման առենակության

ՍԵՂՄԱԳԻՐ

ԵՐԵՎԱՆ - 2004

Ատենախոսության թեման հաստատվել է ԵՊՀ Իրանագիտության ամբիոնում:

Գիտական դեկանակար՝

բանասիրական գիտությունների, դոկտոր
պրոֆեսոր Գ. Ս. Ասատրյան

Պաշտոնական
ընդունակություններ՝

բանասիրական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր
Վ. Գ. Համբարձումյան

բանասիրական գիտությունների թեկնածու, դոցենտ
Ս. Բ. Կարաբեկյան

Առաջատար
կազմակերպություն՝

Դիզայն համալսարանի Լեզվաբանության ամբիոն
(Università degli Studi di Pisa, Dipartimento di Linguistica)

Պաշտպանությունը կայանալու է 2004թ. հունիսի 29-ին՝ ժամը 12⁰⁰-ին ՀՀ ԳԱԱ
Հր.Աճայինի անվան լեզվաբանության ինստիտուտի և Երևանի պետական
համալսարանի 019 Միացյալ մասնագիտական խորհրդի նիստում (հասցեն՝
Երևան 375025, Ալեք Մանուկյան փ., 1, Իրանագիտության ամբիոն):

Ատենախոսությանը կարելի է ծանրանալ ՀՀ ԳԱԱ Հր.Աճայինի անվան
լեզվաբանության ինստիտուտի գրադարանում և ԵՊՀ Իրանագիտության
ամբիոնի ընթերցարանում:

Սեղմագիրն առաքված է 2004թ. մայիսի 29-ին:

Մասնագիտական խորհրդի
գիտական քարտուղար՝

Արմեն Արմենի Ղարիբյան

բանասիրական գիտությունների
թեկնածու Ն. Մ. Սիմոնյան

ԱՇԽԱՏԱՆՔԻ ԸՆԴԱԾՈՒՐ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ

1. Թեմայի արդիականությունը: Հայ-բոշաների գաղտնալեզվի կամ լոմավորենի գրառման և ուսումնասիրության արդիականությունը պայմանավորված է, նախ և առաջ, այս հանգամանքով, որ վերջինս, հանդիսանալով մասցուկային (ուղիկուային) լեզու, կանգնած է ամբողջովին մոռացության մատնելու վտանգի առջև: Այս կարգի լեզուները գիտական գրականության մեջ հաճախ ուղղակիրեն անվանում են վտանգված լեզու (endangered language):

Բացի այս, հայ-բոշաների գաղտնալեզվին նվիրված վերջին հետազոտությունները վերաբերում են 19-րդ դարի վերջին և 20-րդ դարի սկզբներին՝ ընդգրկելով միայն այս լեզվի բառապաշարի, որոշ սակավաբար տերատերի հրատարակումներ և ծայրահետ համառոտ ու արդեն բավական հնացած քերականական վերլուծություններ: Ավելորդ չկ նշել նաև, որ իր ամբողջության մեջ լումավերն երբեցք չի ենթարկվել պատմահամեմատական ընության:

Ինչպես բազմաթիվ այլ համրությների, որոնց մասին պատմությունը չի պահպանել վաղ տվյալներ, այնպէս էլ հայ-բոշաների դեպքում, վերջիններիս գաղտնալեզուն, հանդիսանալով Հնդկական թերակղուոց ժառանգած նրանց հնդարիական նախկին բարբառի միակ վերապրուկը, կարևորագույն և, թերևս, միակ սկզբնաղյուրն է այժմ արդեն հայ ժղովորդի հատվածներից մեկի վաղ պատմության:

Լումավերնի նորութիւնը գնչուական լեզվաբանության ոլորտ ներմուծումը օգնում է լրացն նաև հայ-բոշաների գաղտնալեզվին ցեղակից եւլուսական և ասիական գնչուական զանազան լեզուների և բարբառների ցարդ չլուսաբանվող բազմաթիվ խնդիրներ, ընդունակ մինչև ներզնչուական բարբառային նոր դասակարգման առաջ քաշումը:

Հայ-բոշաների գաղտնալեզվի ուսումնասիրությունը, հանդիսանալով միջառարկայական հետազոտության լավագույն օրինակ, հավասարապես արդիական է թե հայագիտության և թե՛ գնչուագիտության, իսկ ավելի լայն իմաստով՝ նաև հնդարիակիտության տեսանկյուններից:

2. Աշխատանքի նպաստակն ու խնդիրները: Ներկա ատենախոսության նպատակն է, հեղինակի կողմից 2000թ.-ից ի վեր, Հայաստանի և Վրաստանի տարածքներում բնակվող հայ-բոշաների շրջանում հավաքված դաշտային նյութերի և խնդրին առնչվող առկա ողջ գրականության հիման վրա իրականացնել հայ-բոշաների գաղտնալեզվի համաժամանակյա և տարածամանակյա ուսումնասիրություն: Այս նպատակն իրագործելու համար դրվել են հետևյալ խնդիրները:

Հնարավորին համապարփակ կերպով գրանցել և ներկայացնել լումավերնի դեռևս պահպանված լեզվական նյութը:

Գրի առնված նյութերը ենթարկել հնչյունաբանական և քերականական համակողմանի վերլուծության:

Վեր հանել և մյուս գնչուական լեզուների հետ համեմատել լումավրենի մնացուակային բնիկ քերականական ձևերը և հնդարիական ծագման բառապաշարը:

Հաշվի առնելով հնդարիական լեզվաբանության ընձեռած հնարավորությունները՝ ստուգաբանական բննության ենթարկել լումավրենի հնյունաբանությունը, բնիկ քերականական և բառապաշարային ձևերը:

Ցույց տալ և վերլուծել շրջակա կամ շփման լեզուներից տարբեր ժամանակաշրջաններում կատարված, հատկապես, վաղ փոխառությունների շերտերը:

Դիտարկել լումավրենը գնչուական լեզուների և բարբառների համակարգում և պարզել ներգնչուական բարբառային փոխառնչակցությունները:

Ճշգրտել լումավրենի տեղը գնչուական լեզուների և բարբառների համակարգում:

Կազմել լումավրենի բնիկ և վաղ փոխառություններ հանդիսացող բառերի հնարավորին ամբողջական բառարան:

3. Աշխատանքի գիտական նորույթը: Ատենախոսության թեմային առնչվող գրեթե բոլոր հետազոտությունները վերաբերում են դեռևս գնչուագիտության և հնդարիական լեզվաբանության ձևավորման արշալույսին, հետևաբար դրանց գերակշիր մասը այժմ հնացած է կամ, ի նկատի առնելով հնդարիագիտության նորագոյն ձեռքբերումները, առնվազն կարիք ունի որոշակի քննական մուտեցման:

Աշխատանքում ընդգրկվել է դաշտային ուսումնասիրությունների ընթացքում հավաքված բավական ծավալուն լեզվական նոր նյութ, որը մինչ այժմ հայտնի չի եղել գնչուագիտությանը:

Առաջին անգամ փորձ է կատարվել թե՛ն կարագրական և թե՛ն զուգահեռ պատմահամեմատական կտրվածքով քննության առնել հայ-բոշաների գաղտնակեզվի հնյունաբանությունը, քերականությունը և բառապաշարը:

Նեկայացվել է ցարդ չստուգաբանված կամ անհայտ մի շարք բառերի և քերականական մնացուակային ձևերի ծագումը, ճշգրտվել են նախկին հետազոտողների կողմից առաջ բաշված որոշ ստուգաբանություններ:

Առաջին անգամ, հաշվի առնելով տարբեր վայրերից գրի առնված հայ-բոշաների գաղտնակեզվի տարբերակների առկա նյութի համեմատությունը, կատարվել է լումավրենի բարբառային դասակարգման փորձ:

Լումավրենի և գնչուական մյուս լեզուների համեմատության ընթացքում, առաջին անգամ ներգրավվել է մերձակորարևելյան գնչուական բարբառների ընձեռած ողջ նյութը:

Հիմնվելով ներգնչուական բառային և հնյունական գուգաբանությունների վրա առաջարկվել է գնչուական լեզուների բարբառային նոր դասակարգում:

4. Աշխատանքի գործնական նշանակությունը: Ներկա ատենախոսության մեջ առաջ քաշված դրույթները կարող են նպաստել ինչպես գնչուական լեզվաբանության, այսպես էլ, ընդհանրապես, հնդարիագիտության և հայագիտության մի շարք առանցքային հարցերի լուսաբանմանը հայ-բոշաների գաղտնակեզվի և գնչուական այլ լեզուների հարաբերակցության, նաև, առանձին վերցրած այդ լեզուների գրալեցրած տեղի և շփման լեզուների հետ ունեցած փոխառնչակցությունների տեսանկյունից: Պատմահամեմատական լեզվաբանության օգնությամբ ձեռք բերված տվյալներն ու վերլուծությունները կարող են անզնահատելի նյութ հանդիսանալ տվյալ լեզուներով խոսող հանրույթների վաղնջական պատմության մույթ էշերին լույս սփուրելու նպատակ հետապնդող պատմաբանի համար: Քանի որ հայ-բոշաներն արդեն իսկ հանդիսանում են հայ ժողովրդի անքաղլուի հատվածներից մեկը, ապա, փաստորեն, կարող են լուսաբանվել նաև հայ-գնչուական վաղ շփումների և հայերի մեջ հնդարիական ծագման եթերի միավորների խաղաղ տարրալուծման գործնթացները, որոնք կարող են լայն ասպարեզ տրամադրել նաև ազգագրագիտության և ազգաբանության խնդիրներով գրաղվող մասնագետին:

Բացի այս, աշխատանքում առաջ քաշված նոր և ճշգրտված ստուգաբանությունները, կարող են օգտակար լինել գնչուական տարբեր բարբառների, ինչպես նաև հնդարիական այլ լեզուների ստուգաբանական բառարանների կազմման ընթացքում:

5. Աշխատանքի մեթոդաբանական հիմքը: Ատենախոսության մեջ գործակինոաբար օգտագործվել են նկարագրական և պատմահամեմատական լեզվաբանության մեթոդները: Նշված մեթոդների գործադրությունը կամ համադրումը պայմանավորված է այն հանգամանքով, որ ատենախոսությունը նպատակ է հետապնդում լումավրենը դիտարկել թե՛ն համաժամանակյա և թե՛ն տարրաժամանակյա լեզվաբանական վերլուծության տեսանկյունից, ինչպես նաև բացահայտել ցեղակից գնչուական լեզուների և բարբառների հետ վերջինիս ունեցած ընդհանրություններն ու տարբերությունները:

6. Աշխատանքի ժամանակագրական սահմանները: Ժամանակագրական առումով, ատենախոսությունն ընդգրկում է հնդարիական լեզուների այլ թվում նաև լումավրենի զարգացման բարեկարգ սկսած ինը հնդարիական լեզվական ընդհանրության դարաշրջանից մինչև միջին և նոր հնդարիական լեզուներ ու բարբառներ: Աշխատանքում ներգրավված գնչուական լեզվամթերքը իր մեջ ամփոփում է գնչուականի զանազան բարբառների նյութը գրի առնված 19-րդ դարի սկզբներից ընդհուպ մինչև մեր օրերը:

7. Աշխատանքի փորձաքննությունը և պաշտոնական հավանությունը: Ատենախոսության մի շարք դրույթներ և եզրակացություններ լուսաբանվել են «Իրան-նամե», «Արևելք», «Orientalia», «Iran & the Caucasus» հանրապետական և միջազգային գիտական հանդեսներում և ժողովածուներում հեղինակի լույս

ընծայած հայերեն, ուստերեն և անգլերեն հոդվածներում, «Երիտասարդ արևելագետների հանրապետական 21-րդ զիտական նստաշրջանում», Բուլղարիայում և Ավստրիայում կազմակերպված «Գնչուական լեզվաբանության 5-րդ և 6-րդ միջազգային զիտածողովներում» ընթերցված գեկուցումներում և հրատարակված թեգերում:

Ատենախոսությունը ամրողությամբ քննարկվել և պաշտպանության է երաշխավորվել ԵՊՀ Արևելագիտության ֆակուլտետի Երանագիտության ամբիոնում: Առանձին հիմնախնդիրներ քննարկվել են արտերկրյա մասնագետների և համապատասխան բնագավառների գիտնականների հետ: Հեղինակի տրամադրած որոշ դաշտային նյութեր, ինչպես նաև տեսական բնույթի մի քանի առաջարկներ, համապատասխան հղմամբ, օգուազործվել են նաև արտասահմանցի զիտնականների հրապարակումներում:

8. Սկզբնադրյուրների և գրականության համառոտ տեսություն: Ատենախոսության մեջ օգուազործվել են հայերեն, ուստերեն, անգլերեն, գերմաներեն, ֆրանսերեն, իտալերեն, պարսկերեն տարաբնույթ աշխատություններ, որոնք ոչ միայն առնչվում են հայ-բռշաների գաղտանալեզվին և այս հանրույթի պատմությանը, այլև հնդարիազիտության և գնչուական լեզվաբանության զանազան խնդիրների: Լայնորեն օգտագործվել են հատկապես հայ-բռշաների գաղտնալեզվի մասին տեղեկություններ պարունակող անհատիք բոլոր հրապարակումները՝ սկսած 1864թ այս լեզվի մասին լույս ընծայված առաջին համառոտ ակնարկից, մինչև 2003թ. նորագույն ուսումնասիրությունները: Հաշվի առնելով հեղինակի առաջ քաշած խնդիրները և եներկ աշխատանքի բնույթից առանձնակի տեղ է հատկացվել զնչուական լեզվական նյութ պարունակող բառարաններին, ինչպես նաև հնդարիական լեզուների ստուգաբանական և պատմահամեմատական խնդիրներին նվիրված աշխատություններին: Անդրադարձ է կատարվել նաև հայ-բռշաների մասին տեղեկություններ պարունակող հայ մատենագիտության ցայսօր հայտնի բոլոր երերին:

9. Աշխատանքի կառուցվածքն ու բովանդակությունը: Ատենախոսության հիմնական մասը (167 էջ) բաղկացած է ներածությունից, համապատասխան թվագրված ենթաքաժիններից կազմված չորս զրուխներից, վերշարանից, համառոտագրությունների ցուցակից և օգտագործված զրականության ցանկից: Բացի այս, ատենախոսությանը կից ներկայացված են երկու հավելվածներ (35 էջ), որոնք ընդգրկում են հայ-բռշաների գաղտնալեզվի որոշ նմուշներ՝ հայերեն թարգմանությամբ, ինչպես նաև ստուգաբանական նշումներ և որոշակի լուսաբանող նյութ պարունակող լումավեն-հայերեն բառարան:

Ներածության (էջ 2-25) շրջանակներում ներկայացվում են հայերենի տարրեր բարբառներում զնչուներին տրվող անվանումները, հայ մատենագրության մեջ «բռշա» նշանակյալի վկայությունները և վերջինիս հավանական զիտական, ինչպես նաև իրենց հայ-բռշաների, շրջանում տարածված ժողովրդական ստուգաբանությունները, բարի ծագման մասին պատմվող պահանջազրույցները և հայերենում առկա բռշաներին առնչվող ասույթները: Ուրվագծվում են հայ-բռշաների բնակության ներկայի սահմանները, մոտավոր կերպով որոշարկվում է նրանց թվաքանակը:

Կառուցվածքային տեսանկյունից, լումավենը ներկայանում է որպես խառնալեզվի (mixed language, intertwined language, Mischsprache) դասական օրինակ: Այն օգտվում է իր հիմքում հնդարիական ծագում ունեցող, հիմնականում զնչուական բառապաշտրից, որի մի զգայի մասը սերտ առնչություններ ունի Եվրոպայում ու Ասիայում տարածված զնչուական այլ լեզուների կամ բարբառների հետ, և արևմտահայերենի՝ մեծ մասմբ, Կարսոն բարբառի, թերականական ձևերից՝ ձևափորելով, փաստորեն, մի յուրօրինակ լեզվական խառնուրդ, որում հիմնական բառապաշտր ժառանգված է նախկին մայրենի լեզմից, իսկ թերականությունը և հնյունական համակարգը փոխառված՝ մեկ ուրիշից, օր՝

լում. Չի-Էնք կու լեյիվավ-Միք-ք ճայրի վրգն-Էլ-ու:

հյ. բրո. Լրտ-անք գու զեղ- Լր-ք մադ ծախ-կ-ու:

հյ. զրկ. զնում ենք զյուղերը մադ վաճառելու:

Այս կարգի խառնալեզուները, համաժամանակյա վերլուծության տեսանկյունից, դժվար է դասել լեզուների այս կամ այն ընտանիքին կամ խմբին: Տարածմանակյա կտրվածքով, եթե համեմատության համար հիմք ընդունենք հիմնական բառամբերը և բնիկ թերականական ձևերի աղքատիկ մնացուկները, ապա լումավենը պետք է տեղադրել հնդեվրոպական լեզվաբանների նոր հնդարիական լեզուների զնչուական խմբում: Վերջինիս մեջ լումավենը, ի նկատի առնելով բառային և հնյունական զրուգաբանությունները, զբաղեցնում է միջանկյալ դիրք մի կողմից մերձավորաբեկյան զնչուական բարբառահմբի, իսկ մյուս կողմից Եվրոպական զնչուների լեզուների միջև: Այսպիսով, փաստորեն, այն կարելի է համարել կենտրոնական զնչուական բարբառ:

Ներկայում հայ-բռշաների մայրենի լեզուն հայերենն է, հետևեաբար՝ զործառնական առումով այս լեզուն զրեթե բացառապես ունի զաղունալեզվի (тайնի յայտ, սեքրետնի յայտ, secret language, Geheimsprache) կամ ծածկալեզվի (արգո) կարգավիճակ. այսինքն՝ խոսդները դիմում են սրան այն դեպքերում միայն, եթե անհրաժեշտ է, որ ոչ-բռշան շնասկանա, թե ինչի մասին է խոսքը: Չնայած զործառության նման սահմանափակությանը այսուհանդերձ, այս աղքատիկ լեզվով կարող են պատմվել նաև «բանահյուսական» պատառիկներ:

Վերջում, հայ բոշաների գաղտնալեզվին նվիրված գրականության տևողության միջոցով, տրվում է այս լեզվի ուսումնասիրության մանրամասն պատմությունը:

ԳԼՈՒԽ 1. ՀՆՉՅՈՒԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ (Ենթագլուխներ 1 – 4)

Այս գլխում (էջ 26–60) համաժամանակյա և տարաժամանակյա քննության են առնվում հայ–բոշաների գաղտնալեզվի ձայնավորական և բաղաձայնական համակարգերը:

Լուսավորենի ձայնավորական համակարգը՝ բաղկացած 6 հնչույթներից, ամրողությամբ նույնական է գրական հայերենի հետ: Բարբառային հայերենում առկա, բայց գրական լեզվում բացակայող որևէ ձայնավոր հնչույն մուտք չի գործել լուսավորեն, բացառությամբ, թերևս, օ հնչույթի դիրքային օտարքերակի:

Աղյուսակ 1. Լուսավորենի ձայնավորները բարձրացում շարք

	առաջնային	միջին	ետին
կերին	i	u	
միջին	e (ö)	ə	o
ստորին			a

Հայ–բոշաների գաղտնակալի բնիկ բառապաշարը հիմնված է 23 բաղաձայնից բաղկացած բաղաձայնական համակարգի վրա, որոնք ոչնչով չեն տարբերվում գրական հայերենի համապատասխան հնչույթներից: Անհրաժեշտ է նշել, որ ի տարբերություն հայերենի, բաղաձայնը չունի հնչույթային արժեք և, փաստորեն, հանդիսանում է r-ի մի տարբերակը՝ առնմանության հետևանարով և հայերենում համապատասխան հնչույնի գոյության պայմաններում պատմականորեն ձևավորվելով վաղ լուսավորեն -*rr- < h. հա. -tr- բաղաձայնական խմբի զարգացման արդյունքում: Պատմական համապատասխանության տեսանկյունից, որևէ առնչակցություն չունի յ ձայնորոր, որը բարբառային հայերենի ազդեցությամբ կ բաղաձայնի փոփոխման հետևանք է, հմտն՝ vah- / vay- «փափել հարվածել» < պկ. vahač, vahēi, պ. vadhati «փափում ե», շարդում ե» < h. հա. *vadhati, vadhayati ն.ի. և այլն: Սուլաշչական š, z և γ բաղաձայնները հանդիպում են միայն փոխառյալ կամ սուլազարանման շենթարկվող սակավ բառերում, օր.՝ šihri / širvi «ուտենու ճյուղերը, որոնցից կողով և զամբյուր են հյուսում», սաև «ոչչարի մորթը բրդից վերջնական մաքրման համար օգտագործվող քերիչ գործիք» < h. բրբ. ուշիւ «սպիկի ուշ ժամանակի համար նախատեսված» < h. ուշ, zinař «մաղի ցանցը գործելու համար օգտագործվող երկարյա սրածայր գործիք» < թբք. sinara «խոշոր փայլախայճ», yazaray «ոչչարի մորթը բրդից նախնական մաքրման համար օգտագործվող քերիչ գործիք» < թբք. բրբ. զաշայ, թբք. կաշացի «քերիչ» և այլն: Հայերենին բնորոշ մասցած բոլոր բաղաձայնները (j, c, c', ž) հանդիպում են միմիայն հայկական ծագման բառերում և խոսքային ներմուծումներում: Կարինի բարբառի տարածման շրջաններում, մասսամբ նաև Երևանում

խոսակցության ընթացքում հայերենից լուսավորեն ներմուծվող բառերում, հաճախ պատահում են ձայնեղ և ձայնեղ պայթական b', g', d', j', յ բաղաձայնները: Հազվադեպ դեպքերում՝ հատկապես բառասկզբում, ձայնեղացման են ներարկվում նաև հնդարբական ծագման բառերը, օր.՝ g'ar / gar «ուուն»: Ոչ բնիկ բառերում և փոխառություններում վկայված են նաև բայնացած բաղաձայններ:

Աղյուսակ 2 Լուսավորենի բաղաձայններ

պայթական	հպաշփական		սուլաշչական		մնացյին	ձայնություն
	ձայնեղ	լուս	ձայնեղ	լուս		
շրինային	b	p	p'		v	f
աստամային	d	t	t'	*(j)	(c)	*(c')
ալվենային				ž	č	č'
ետնաբրային	g	k	k'		(ž)	(š)
կոկորդային					(γ)	x
					h	

Առանձին ներարաժիններով մանրամասն ներկայացվում են հայ–բոշաների գաղտնալեզվի բնիկ հնչունական համակարգի ծագումը և պատմական փոխառնչակցությունները միջին և հին հնդարբական համապատասխան հնչունների հետ:

ԳԼՈՒԽ 2. ԶԵՎԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ

(Ենթագլուխներ 1 – 9)

Ներկա գլխում (էջ 61–116) քննության է ենթարկվում հայ–բոշաների գաղտնալեզվի ձևաբանությունը: Յուրաքանչյուր խոսքի մաս նկարագրվում է համաժամանակյա կտրվածքով, ապա, հաշվի առնելով միջին և հին հնդարբական լեզվադրաշրջանների նյութը, քննարկվում է պատմական կտրվածքով, որից հետո համեմատվում է եվրոպական և ասիական գնչունների ցեղակից լեզուների համապատասխան քերականական ձևերի հետ: Հաշվի առնելով այն, որ լուսավորենի քերականությունը գրեթե ամբողջովովին վերցված է բարբառային հայերենից՝ հիմնական ուշադրությունը բնեղութել է մասցարկային բնույթ ունեցող բնիկ քերականական ձևույթների բնարկման վրա:

Լուսավորենում գոյություն ունեն որոշյալ և անորոշ հոդեր, որոնք փոխառված են արևմտահայ բարբառներից: Որոշյալ հոդերն են -ə, -ən, իսկ անորոշը -mə, որն ունի ետադաս կիրառություն:

Հայ–բոշաների գաղտնալեզվի բնիկ բառապաշարի ամենազգայի մասն են կազմում գյականները: Բարբառային հայերենից են փախառյալ նաև հոգնակիի անխափի բոլոր վերջավորությունները: Գյականների ճնշող մեծամասնությունը կարող է հանգեցնել հին հնդարբական -ə, -ən, -i, -ə, -u առաջնային ածանցներով վերջացող հիմքերին, օր. nəl «աղ» (դրափիխությամբ) < պկ., պ. lavaqə-, ləðə- «աղ» < h. հա. lavaqa-, ն.ի. (հմտն.՝ պկ. ləñə- «աղ»); level

«Աստված» < պ. dēvātā- «Աստված, աստվածություն» < h. hui. dēvātā- «աստվածություն»; t'uli «հոդ» < պկ. dhūlī- «փոշի» < h. hui. dhūlī- ն.ի.; k'ori «ձի» < պկ. ghōdī- «ձի» < h. hui. ghōdī- ն.ի.; buhu «շատ» < պկ., պ. բահու- «շատ» < h. hui. bahú- ն.ի.; sarsí «կին, ամուսնացած կին, տարիքով կին» (< որափոխությամբ վաղ լու. *sasri) < պ. sasurí- «սկեսուր, զրանչ» կազմված է իգականի -ի ածանցով < h. hui. նաև՝ «սկեսուր, աներ»: Ազգակցություն ցոյց տվող գոյականների մի մասը հանգում է իին հնդարիական -ր բաղաձայնով հիմքերի ստորին ձայնարձով ձևերին, ըստ որում, իին հնդարիական արմատը կարող էր բարեկցված լինել նաև -կա ածանցով. p'al «Եղբայր» < պ., Աշ. արձ. եհատ «Եղբայր» < h. hui. bhrāt̄- ն.ի.; jorav «փեսա, փեսացու» (վաղ լու. *javrav) < h. hui. *jāmātra(ka)- «աղջկա ամուսին» < վդ. jāmāt̄- ն.ի.; janrav / jařav «հարս, նոր ամուսնացած կին» < h. hui. *yāntrikā-, *yātrikā- «ամուսնու եղբոր կին, տեղերկին» < h. hui. yāt̄- ն.ի.: Վկայված են նաև իին հնդարիական -ո բաղաձայնով արմատներին, ինչպես նաև -in, -la, -ti, -ti, -(an)ta և -ya ածանցներ ստացած հիմքերին հանգու գոյականներ, օր չամ «մաշկ, կաշի» < պկ., պ. camma- «կաշի, վահան» < h. hui. cárman- «մաշկ, կաշի»; p'antri / p'anri «հավ» < h. hui. patrin- «թևավոր, փետրավոր, բռչոն»; mahi «զինի, օղի, ողելից խմիչք» < h. hui. madhulá- «ողելից խմիչք»; vahri «ամուսնանալու տարիի շամուսնացած աղջիկ, տանը մնացած աղջիկ» < մ. հա. *vahñfi- < h. hui. vadhiñ- «երիտասարդ աղջիկ կամ կին, որդու կին»; vadhusi- «հոր տանը ապրող երիտասարդ կին»; leli «տիկ» < h. hui. d̄ti- «կաշի, մորքի, կաշի պայուսակ դարբնի փուրս» < √ D̄R «Ճերքել, պատառուել»; k'el «յուր» < h. hui. gh̄t̄á- «հալեցրած ճարպ, զուած կարած կամ յուր» < √ GHR «տար լինել»; utr̄ «արձար» < պկ. ruppa- «արձար» < h. hui. rúpya- ն.ի.; vasəndav «անձրև, ձյուն, կարիլ» < մ. հա. *varisanta(ka)- «անձրևող, տեղացող» (հմտն. հ. հա. varşati «անձրևում է, տեղում է»; √ VRŞ «անձրևել»):

Նոր հնդարիական լեզուների մեծամասնության նման վաղ լումավենին ևս հատուկ է եղել քերականական սեռի կարգը: Մասնավորապես, այս լեզուն առկա մնացուկային որոշ ձևույթներ հնդարիակություն են ընձեռում կարծիք կազմելու նախկինում գոյականի կենսունակ սեռի մասին: Այդպիսի ձևույթներից են արականի -an ցուցիչը, որը, նույնական լինելով եվրոպական գնչուների լեզվի արականի -o վերջավորության հետ հանգում է միջին հնդարիական -ao / -ako ձևին, որն, իր հերթին, կարող է բխեցվել իին հնդարիական -ka ածանցով բարդեցված -a հեղուման արական սեռի բառերի ուղղականի -akaհ վերջավորությունից և նախկին իգականի -i ածանցը, որն իր մեջ միավորել է մեծ մասամբ միջին սեռի գոյականներ կազմող միջին հնդարիական -i < h. hui. -i վերջավորությունը և բացառապես իգականի ցուցիչ հանդիսացող միջին հնդարիական -i < h. hui. -i ածանցը, որը կարող էր բարեկցված լինել -ya վերջածանցով, ինչպես նաև կազմել իգական գոյականներ իին և միջին հնդարիական արական սեռի բառերից:

Աղյուսակ 3. Արական սեռի գոյականները գնչուական լեզուներում

լու.	եվ.	պդ.	մշ.	դժ.	հյ.	հ. հա.
malav	ma(n)ro	mona	mena	menav	hwag	maṇḍakaḥ

manč'av mač(h)o mača mača mača ձուլ matsyakah

Աղյուսակ 4. Իգական սեռի գոյականները գնչուական լեզուներում

լու.	եվ.	պդ.	մշ.	դժ.	հյ.	հ. հա.
ak'i	yakh hq.	iki	aki	awr	áks-i- uč.	
čuri	č(h)uri	čiri	čeri	čari	čaṇaṇaḥ	kṣurī-

Հոգնակին կազմվում է բարբառային հայերենից փախառայա -tik⁴, -tank⁵ և, նաև գրական հայերենում առկա, -(n)er հոգնակիակերտ ածանցներով, օր՝ mančav «ձուլ» – mančavtik⁶ / mančavner, lom «հայ-բռշա» – lomavtik⁷ / lomavner / lomer, k'ori «ձի» – k'orivavtik⁸ / k'oriner, čok'i «աղջիկ» – čok'ivavtik⁹ / čok'evntik¹⁰, pəsu «թուրք» – pəsavtik¹¹ / pəsuner / pəsavner և այլն: Բացառությամբ -առ ձևույթով ավարտվող գոյականների, որոնց հոգնակի թիվը կազմվում է հոգնակիակերտ վերջածանցների անմիջական հավելմամբ, մյուս բոլոր բառերը հիմնականում -tik¹² հոգնակիակերտից առաջ ստանում են -an-, իսկ ձայնավորից հետո -vav- (-i -ov) վերջացող գոյականների մի մասը զուգահեռաբար նաև -v) ձևույթը, որը կամ արյուննը է վաղ լումավենի արականի վերջավորության ընդհանրացման, կամ, ոչ առանց կասկածի, կարող է հանգեցվել միջին հնդարիական հայցական հոլովի -am < h. hui. -am վերջավորությանը:

Հայ-բռշաների զադունակեզի հոլովական վերջավորությունները և հոլովման համակարգը նոյնպես ամբողջովին վերցված են հայերենից:

Բնիկ հնդարիական ծագում ունեցող ածականները այս լեզվում քանակային առումով ներկայացված են բավական արքատիկ կերպով: Սրանց գերակշիռ մասը հանգում է իին հնդարիական ածականական և գոյականական հիմքերին, օր՝ kalav «սև» < պկ. kāla(ya)-, պ. kāla(ka)- «սև, մուգ կապույտ»; čelav / žilav «արագ, շուտ» < h. hui. jirá- «արագ»; buk'av «քաղցած, սոված» < h. hui. *bubhukšaka-, *b(h)ukšaka- «քաղցած», kurgav «քաղցր» < պկ. guða-, gula-, պ. guða- «դրոշար» < h. hui. guða- «շարարեղեզնի եռացրած հյուր», purgav «լիրը» < պ. rūra- «լիրը», պկ. rūraya-, պ. rūra(ka)- «լիրնել» < h. hui. rūraka- «լիրնել»; sančav «ճիշտ» < պկ. sacca- «ճշմարտություն», պ. sacca- «ճիշտ, ճշմարիտ» < h. hui. satya(ka)- «ճշմարիտ, ճշմարտություն» և այլն: Մի քանի ածականներ հանգում են իին հնդարիական -ta ածանցով կազմված անցյալի դերբաներին, օր՝ tatav «տար, շոգ» < պկ. tatta-, պ. tatta-, tattaka- «տար, այրող» < h. hui. taptá- «տար, տարած, շոգ», sutav «քնած, պատկած» < պկ. sutta- «քնած, պատկած», պ. sutta- «քնած, քուն» < h. hui. suptá- «քնած, քնելու պատկած» և այլն: Լումավեն մի բառում պահպանվել է այժմ արդեն որպես այդպիսին չգիտակցվող վաղ լու. -alav < մ. հա. -ala < h. hui. -(a)la ածականակերտ ածանցը թուրավական տերավական «ծարավ» (< վաղ լու. *trusálav / *tursálav) < h. hui. *trşyā- «ծարավի զգացում»: Քարացած բնիկ ածանց պարունակող ածականների շաբթին պետք է դասվի, հավանաբար, նաև լու. nasuhav, nasuvav «հիմվան» բառը, որում, թերևս, առկա է վաղ լումավենն *na- < պկ. ḥa, ḥa, պ. na, < h. hui. վդ. nā «ոչ, չ» ածականակերտ նախաճանցը: Վաղ լումավենի ածականին ևս հատուկ է եղել քերականական սեռի կարգը: Ծամանակակից լեզվում գրեթե բոլոր բնիկ ածականները պահպանվել են նախկին արական սեռի -an-

Վերջավորությամբ: Ինչպես զնշուական մյուս լեզուներում, ենթադրաբար վաղ լոմավորենում նույնպիս ածականների իցական ցուցիչ է եղել -i ձևույթը, որով ձևավորված ածականներից պահպանվել են լոյ մի քանի բառեր՝ հավանաբար արական սերի վաղ ընդհանուրացման հետևանքով, օր.՝ չուու «փորք, քիչ» < մ. հա. *chāvannī- (-пп- ածանցով և իցականի ই վերջավորությամբ) < պկ. chāva-, պ. chāpa- «մատղաշ կենդանի» < հ. հա. *chāpā- «երիխտասարդ, մատղաշ» (հմտն.՝ հ. հա. chā- «մատղաշ կենդանի») կամ < հ. հա. սեռ. եզ. յնահ < յնվան- «երիխտասարդ»:

Աղյուսակ 5. Ածականի սեռը զնյուական յէզուներում

<i>l̥nsl.</i>	<i>b̥v.</i>	<i>w̥η.</i>	<i>v̥z.</i>	<i>η̥z.</i>	<i>h̥j.</i>	<i>h. h̥w</i>
<i>w̥r.</i>	tatav	tato	täta	tattei hq.	tata /dada	<i>sw̥w̥p,</i>
<i>hq</i>	*tati	tati	täti		*tati /*dadi	<i>z̥nq</i>
<i>w̥r.</i>	*čunav	čīna	-	-	žuna	<i>ψ̥npr̥,</i>
<i>hq.</i>	čumi	čīni			*juni	<i>p̥hs</i>

Աղյուսակ 6. Լուսավորենի և ելքոպական գնչուների բարբառների թվականների համեմատությունը

	<i>l̥nuʃ.</i>	<i>n̥t̥.</i>	<i>ɻ̥l̥.</i>	<i>p̥p̥.</i>	<i>qq̥.</i>	<i>ɳq̥.</i>	<i>ðaɳɳuʃ</i>
1	ak	ye <u>k'</u>	(y)ekh	ye <u>k(h)</u>		(y)ek	h. hu. *ēkka-
2	lu(y)i	dū <u>i</u>	du <u>y</u>	du <u>y</u>	du <u>y</u>	du <u>i</u>	h. hu. dvé, duvé
3	*t̥ərin	trin	trin	trin	tir̥in	dui-ek, si	h. hu. tr̥ni
4	č̥ətar	štar	štar	(i)štar		dui fi dui, čhar	h. hu. catvárah
10	las(ə)	deš	deš	deš,	deš	das, deš	h. hu. dáša-
				des			

Աղյուսակ 7. Լումավրենի և մերձավորաքնչեցան գնչուների բարքառների թվականների համեմատությունը

<i>լուն.</i>	<i>պղ.</i>	<i>լր.</i>	<i>սիր.</i>	<i>մշ.</i>	<i>դշ.</i>	<i>լի.</i>	<i>զիւն.</i>	<i>ծագումը</i>
ak lu(y)i	yika(k) dī(s)	yikak di	ika dedi	yuка (di)di	ya duy, doy	yäku düi	yäku düi	h. hu. *ekka- h. hu. dvé, duvé
*tərin	taran	taran	turun,	dun,	teran,	terin		h. hu. trini
čətar	štār	štār	trōn	tirin	trin	išdör,		h. hu. catvárah
las(ə)	das, des	das	das, des	dez, dest	dah	de(h), dä	wunu dab	h. hu. dása-

Հին հնդարիական դերանվանական համակարգից նույնպես պահպանվել են սակավ թվով բնիկ արմատներ: Որպես անձնական դերանուններ են հանդես գալիս *merav-*, *terav-* և *hevav-/hev-* ձևերը: Դիմային որոշարկման նպատակով սրանք պարտադիր կերպով ստանում են հայերենից փոխառյալ -s, -d, -e դիմորոշ հոդերը, իսկ հոգնակիակերտ -tik/-tonk' վերջավորություններով արտահայտվում է վերջիններին թիվը: Որպես ցուցական դերանուն է հանդես գալիս երրորդ դեմքի անձնական հեռ ձևը, որին հայերենի ազգեցությամբ բնորոշ է եռարիմայնությունը, ինչը առաջին և երկրորդ դեմքերի համար արտահայտվում է -s և -d հոդերի կցմամբ: Լուսավորենում պահպանվել են նաև կե «ի՞նչ», kon «ո՞վ», kesvar «ի՞նչպես», keyədur / keyədər «ի՞նչքան (չափ), ո՞քափ», kevav «ինչո՞ւ», keti «քանի՞ն, ո քան (հասու)», kateł «ո բուեր» հարցական դերանունները: Որոշակի դերանուններից լուսավորենում վկայված է միայն *sav* «բոլոր, ամբողջ, ողջ, լիիվ», իսկ անորոշներից կետ' մօ «մի քանին, բրբո. քանի մ, քանի մը»: Առաջին և երկրորդ դեմքի անձնական դերանունները հանդիսանում են իին ստացական դերանունների մնացուկային ձևեր, որոնք ուղղակի սերում են միշին հնդարիական ստացական դերանուններից՝ *merav-* «ես» < վադ լու. «*իմ» < ապ. *uug*. *mēra-*, *mahāriya-*«իմ» < h. *hw.* **mahya(m)ra-*, *hūmūn*.¹ h. *hw.* 1-ին դ. *upr.* *māhyam*, *piṇḍ*. *áham* «ես»; *terav-* «դու» վադ լու. < **ṛṇo* < ապ. *uug*. *tuhara-**ṛṇo* (-սիա- > -է- 1-ին դեմքի դերանվան նմանակությամբ) < h. *hw.* **túbhya(m)ra-*, *hūmūn*.² h. *hw.* 2-րդ դ. *upr.* *túbhya(m)*, *piṇḍ*. *tvám* «դու»: Երրորդ դեմքի և ցուցականի ձևից, սերում է իին հնդարիական ցուցական դերանուններից՝ *hev-* «նա» < պկ. *ahō* «այն» < h. *hw.* Վդ. *piṇḍ*. *asáu* ն.ի. *կամ* < ապ. Շիծ, Շիա «ապ» < h.

հա. վդ. ուղդ. էզ. ար. տակ. Հարցական դերանունները անխտիր հանգում են հին հնդարիական հարցական **կա-** դերանվանահիմքի տարբեր ձևերին: Միակ բնիկ որոշյալ դերանունը ևս հանգում է հին հնդարիական դերանվանական ձևի **sav** «քոլոր, ամբողջ, լրիվ, ողջ» < ապ. սանա-, պկ. savva-, Աշ. արձ., զդ. sava. պ. sabba- «բոլոր, ողջ» < հ. հա. sárva- նի:

Աղյուսակ 8. Դերանունները լուսավորենում և գնչուական մյուս լեզուներում

	լում.	եկ.	պդ.	մշ.	դժ.	լր.	կր.	դն.
1-ին	merav	miro	(-m)	magi	mera	(-m)	manki	meri
2-րդ	terav	tiro	(-r)	dirgi, turki	tera	(-r)	toiki	teri
3-րդ	hev	ար. ov	panji	hui	hu	beili-	hui	uri
			hq. oi		ohe			
n զ	kon	ko(n)	kōn	-	ku	kū	-	-
h ն	ke, *ka	so	kē(i), kā	-	qa	keki	-	-
p անի	keti	keti, kitī	ktī	-	qiti	-	-	-
n բուեղ	katel	kay	kati, ka	-	guy	keita	-	-
րոլոր	sav	sar	-	-	sī	-	-	-

Նոր հնդարիական, այդ թվում գնչուական, մյուս լեզուների մեծամասնության նման, ըստ երևույթին, նաև հայերենի ազդեցությամբ լուսավորենը պահպանել է հետորային համակարգը: Հետորիների մեծամասնությունը ժառանգված է բնիկ հնդարիական ձևերից՝ **manj** «մեջ, մեջուել» < պկ. majjha-, պ. majha-, Աշ. արձ. majha «միջին, մեջուել» < հ. հա. mādhyā- նի, madhyē «մեջ, մեջուելում»; **upra** «վրա» < պկ. uppari «վերև» < հ. հա. *uppari նի. (հմմտ.՝ Նի. փ. upari, պկ. uvari, uvariṁ նի. < հ. հա. upári նի.); **ak'av** «առաջ, դիմաց» < վադ. լու. ***agav** < պկ. պ. agga- «դիմաց, վերև, ծայր» < հ. հա. վդ. ágra- «զազար, վերև, դիմաց»; **barah, baray** «դուրս» < պկ. bāhara- «արտաքին, դրսի» < հ. հա. *bāhira- «արտաքին» (հմմտ.՝ պկ., պ. bāhira- «արտաքին, դրսի»; պ. bāhirāt, պկ. bāhiraō «դուրս»); **anray** «ներսը» < վադ. լու. ***antra** (բառավերջի - այ նմանակությամբ՝ **baray**) < պկ. a'mtarā-, պ. antarā- «ներս < հ. հա. վդ. ántara- «ներսի մասը, մեջուել, մոտ, հարևան»; **munday** «ցած, ներքն, տակ» (բառավերջի - այ նմանակությամբ՝ **baray**) < պկ. bunda- «ծառի արմաս» < հ. հա. *bunda- նի. կամ < պկ. būndha- «ծառի բունք, արմաս» < հ. հա. bundha- «ներքն, ցած, տակի մասը»: Որոշ հետորիների **dugah, dugay** «մոտ», **hem** «ետ, ետև», ծագումը այդպես էլ մտնում է անհայտ:

Աղյուսակ 9. Հետորիները լուսավորենում և գնչուական մյուս լեզուներում

	լում.	եկ.	պդ.	մշ.	դժ.
մեջ	manj		manj	-	manč
վրա, վերև	upra	opre, upre	atun	vati, tal	
ցած, ներքն, տակ	munday	tel(e)	axar	büna	bahn, varah
առաջ, դիմաց	ak'av	a(n)gla	ager	vegur	vahri
դուրս	barah	avri	bāra	bahara	mah
ներս	anray	andre	-	-	-
մոտ	dugay	paše	-	nelag	neqa

Ետև hem pala pači penčya, penčoy, pača և հոմալիքները որպես մակրայներ զործածվում են ածականները և հետորիները: Մյուս խոսքի մասերից ամբողջովովին տարանջատված բնիկ հնդարիական ծագման մակրայներից, թերևս, պահպանվել է միայն չյավ «երեկ» < պ. hiyyō, hiyyō, պկ., ապ. hijjō «երեկ» < հ. հա. *hīyas (հմմտ. պկ. hiyyō < հ. հա. վդ. hiyyás, hyas «երեկ») ձեր, որը զուգահեռներ ունի մյուս գնչուական լեզուների հետ՝ նվ. (y)ij, թշ, (y)ic, պկ. սխյտ, սիր. սխ, մշ. hija «երեկ»:

Հայ-բոշաների զաղտնակազմում վկայված են զգալի թվով բայեր: Ըստ որում, դերբայական և ծամանակա-եղանակային խոնարիման բոլոր ձևերը և վերջավորությունները, ինչպես նաև օճանդակ բայր փոխառված են բարբառային հայերենից: Այսպիսով, լուսավորենի բայական ողջ համակարգում բնիկ էնդարիական բոլոր ձևերը, ինչպես խոսքի մյուս մասերի պարագայում, նույնական են հայերենի հետ: Բայական համակարգին առնչվող բնիկ հնդարիական ծագման ձևույթներից լուսավորենում պահպանվել է պատճառականի կազմության մասցուկային -an- < մ. հա. -āv- < հ. հա. -aya- ածանցը, որը վկայված է. **xasav** «խայտառակել» *δիձաղեցնել, *δիձաղլ առարկս դարձնել» (հմմտ. **xas** «ձիձաղել»), lek'av- «ցույց տալ» (հմմտ. lek'- «տեսնել, նայել», lavav- «այր(վ)ել, վառ(վ)ել» (հմմտ. *lav- «այրվել, վառվել»), ruš'an- «հարցնել»: Պատճառականի կազմության այս ածանցը առկա է նաև գնչուական և հնդարիական մի շարք այլ լեզուներում, հմմտ. զնչ. եկ. -an-, օր. as- «ձիձաղել» - asav- «ձիձաղեցնել», dikh- «տեսնել» - dikhav- «սովորեցնել», phir- «քայլել - phirav- «առաջնորդել», պդ. -(n)āu-, օր. xaz- «ձիձաղել» - xaznāu- «ձիձաղեցնել», *dik- «տեսնել» - diknāu- «ցույց տալ», xul- «իշնել, ընկնել» - xlāu- «իշեցնել, ցած բերել» և այլն: Բնիկ ձևույթներից կարելի է նշել նաև Ժմանական խոնարիման նա- «չ» < պկ. նա, նա, պ. ու, ու, ու- < հ. հա. վդ. նա- «ոչ, չ» և արգելական մա «մի, չ» < ապ. մա, պ. մա, մա < հ. հա. վդ. մա «մի, չ» (ստորադաշասկան և հրամայական եղանակներից արգելական նախամասնիկ») ձևերը: Համաժամանակա կտրվածքով լուսավորենի բոլոր բայերը կարելի է բաժանել երեք խմբի պարզ բարդ բարդ և միջածանցավոր: Հայերենից կատարված վաղ փոխառություններում, որպես բարդ բայր անվանական մաս հանդիսանում է կողոյ հայկական բայահիմքերը ստանում են -xi վերջավորությունը, օր.՝ c'asxi karel «ծածկել», sanxi karel «ցանել», netxi karel «վիժել», gərxı karel «ցրել» և այլն: Ըստ ամենայնի, այս վերջավորության չ բաղադայնը առաջացել է հայերենի բառավերջի կ' և կ հնցուններից, ասենք՝ հյ. cack > լու. c'asx-, հյ. c'ank' > լու. sanx-, հյ. girk' > լու. gərx- և այլն, որը հետապայում ընդհանրացել է հայերենից փոխառյալ բարդ բայրի անվանական մաս հանդիսացող բոլոր ձևույթների համար: Բայակազմության մեջ վկայված են այլս կենսունակությունից զուրկ, որոշ բարցած էին հնդարիական բայական նախամասներ ava-, ա-, ապ., pra-, san- / sañ-, ut-, vi-: Լուսավորենի բայահիմքերը հիմնականում սերում են ին հնդարիական ներկայի հիմքերից, վկայված են նաև ին հնդարիական կրավորականի անցյալի դերբային, -ta ածանցով կազմված անցյալի դերբային և -ṇa- ածանցով կազմված բայանաններին հանգող ձևեր՝ alt- «թամբել, բարձել» < պկ. ăladdha- «միացված,

ամրացված, կպած» < h. hu. álabdha- ն.ի. (✓ LABDH «վերցնել, տիրանալ»), *bak'ot-* «ջարդ(վ)ել < պկ., պ. bhagga-, ապ. bhaggia- «ջարդած, կոտրած» < h. hu. bhagna- «ջարդած, կոտրած, պատառուած» (✓ BHANJ «ջարդել, կոտրել»); *mul-* «մենանել» < գր. muda-, Աշ. արձ. muṭa- «մեռած» < h. hu. mṛta- ն.ի. (✓ MR «մենանել», ut'lu- «կանզնել ելնել, սպասել, մնալ, արթնանալ» < պկ. ստհիտա- «կանզնած, ելած», պ. ստհիտ «կանզնում է, ելնում է» < h. hu. utsthita ն.ի. (✓ STHĀ «կանզնել», qñz. եկ. uṣtīlo «կանզնած»); *pavn-* «հաշվել < պպ. ravāṇa-, պկ., պ. pramāṇa- «չափ» < h. hu. pramāṇa- «չափ» (✓ MĀ «չափել»), *sənən-* «ճանաչել» < պ. saññāna- «զիտակցում, ըմբնում, իմացություն, նշան» < h. hu. saññāna- «համաձայնություն, զիտակցություն» (✓ JÑĀ «փմանալ, զիտենալ»): Հին հնդարիական տարբեր ձայնարձով ներկայի հիմքերին են հանգում մնացյալ բոլոր բնիկ բայահիմքերը, օր. *ստորին ձայնարձ*. *puč-* «հարցնել» < պկ. rucchai, պ. rucchatī «հարցնում է» < h. hu. p̄ucchāti ն.ի. (✓ PRACH «հարցնել») և այն; *guṇa* ձայնարձ. Յեր- «զորալ կանչել» < պկ. *jaraī, պ. *jarati < h. hu. járatē «զովարանում է, դիմում է» (✓ GṚ «հայտարարել, զովարանել») և այն; *vṛddhi* ձայնարձ. յան- «փմանալ, զիտենալ» < պկ. jānātī, պ. jānātī «զիտի, իմանում է» < h. hu. jānātī ն.ի. (✓ JÑĀ «փմանալ, զիտենալ») և այն:

Աղյուսակ 10. Բայահիմքերը զնշուական լեզուներում

լում.	եկ.	պղ.	մշ.	դշ.	հյ.	h. hu.
an-	an-	en-	an-	r̄b̄rēl		ánayati
		nan-		naun-		
bant-	phand-	ban-	ben-	bahan-	կապել, փակել	bandhati
bih-	bi-	bih-	bi-	փախենալ	bibhēti	
dov-	thov-	dau-	do-	duh-	լվանալ	*dhauati
ərov-	rov-	rō-	rov-	rū-	լացել	rōdati
jan-	jan-	jan-	jan-	jan-	իմանալ	jānāti
ji-, je-	ja-	ja-	ja-	ja-	գնալ	yāti
kar-	ker-	ker-	ker-	qa-	անել	karōti
mang-	mang-	mang-	mang-	manq-	ուղել	mārgati
pi-	pi-	pi-	pi-	pi-	իմել	pibati
ves-	beš-	wēs-	veš-	beš-	նստել	úpavīśati
vəgn-	bikin-		vukn-	vəgən-	վաճառել	*vikriyāti
xas-	(h)as-	xaz-	xas-	xaz-	ծիծառել	hásati
xat-	xa-	qa-	xa-	piutēl	khádati	

Մյուս բնիկ ծագման խոսքի մասերից լրմավրենում պահպանվել են միայն երկու ձայնարկություն. hi «այն» < ապ., պկ., պ. hi «այն» < h. hu. վդ. hi ն.ի. (հմմտ. պկ. nahi, պ. nahi «ոչ», h. hu. վդ. ná hi ն.ի.) և na «ոչ, չե» < պկ. ոդ, նա, պ. na, Աշ. արձ. na, nā «ոչ, չե» < h. hu. վդ. ná ն.ի.: Առկա են նաև հայերենից փոխառյալ ձայնարկություններ:

ԳԼՈՒԽ 3. ԲԱՌԱՊԱՇԱՐԸ ԵՎ ԲԱՐԲԱՌԱՅԻՆ ՏԱՐԲԵՐԱԿԱՆԵՐԸ

(Ենթագլուխներ 1 – 2)

Այս զիվի (էջ 117–129) առանձին ենթաքամիններում քննարկման նյուուր է դառնում հայ-բռշանկրի զաղտնալեզվի բնիկ և փոխառյալ բառապաշարը, ինչպես նաև զրանցված բարբառային տարբերությունները:

Ի նկատի ունենալով, որ լրմավրենոր ներկայանում է որպէս խառնալեզվի բնորոշ օրինակ, որում, փաստորեն, գրեթե չեն պահպանվել բնիկ թերական ձերական ձերականական ձեւերը կարևորվում է հատկապես այս լեզվի բառային կազմի կամ բառապաշարի ուսումնասիրությունը, որն էլ հանդիսանում է այս լեզուն մյուս հնդարիական և այդ թվում զնշուական լեզուներին կապող հիմնական օղակը: Լրմավրենի բառապաշարը բաղկացած է մի քանի շերտերից, որոնք արտացոլում են հայ-բռշանկրի նախնիների լեզվական փոխառնչակցությունները տարբեր ժամանակաշրջաններում: նախ, որա գերակշիռ մասն են կազմում Հնդկաստանից ժառանգված բնիկ բառերը, այնուհետև դասական պարսկերենից 9-րդ դարից հետո կատարված փոխառությունները, ապա ավելի ուշ հայերենից, թուրքերենից, բրդերենից և նվրոպական զնշուների լեզվից փոխառյալ ձեւերը: Հնդարիական ծագման բառերից պահպանվել են զգալի թվով միավորներ, որոնք կազմում են այս լեզվի հիմնական բառամբերը: Հայերենից լրմավրեն մուտք գործած փոխառությունները բնիկ հնդարիական բառերից հետո կազմում են այս զաղունալեզվի բառապաշարի երկրորդ մեծարիվ շերտը: Բացի այս, հատկապես, տևական պատմողական խոսքի ընթացքում հաճախ լրմավրեն կարող են ներմուծվել հայերեն բառեր կամ ամբողջական արտահայտություն, որոնք, անշուշտ, չի կարելի դիտարկել որպես փոխառություն, չնայած հաճախ վերջիններին և փոխառության միջև սահմանը չափազանց հեղինեղուի է: Հաշվի առնելով այս հանգամանքը՝ հայերենից փոխառյալ բառերի քանակը լրմավրենում որոշարկելը, փաստորեն, հնարավոր չէ, հետևաբար ընմարդկում են միայն այն ձեւերը, որոնք լրմավրենում կնքարկվել են հնյունական կամ խմաստային, ինչ-որ առումով անձանաշելի, փոփոխությունների: Այս բառերից կարելի է նշել *čignav* «խեղճ, աղքատ, անոթի, սոված» < հյ. Ճզնավոր; *javri* «ձավար» < հյ. Ճավար; *nəmət* «փմոր» < հյ. Խմոր և այն:

Արևմտյան Հայաստանի տարածքներում լրմավրենը սերտ փոխառնչակցություններ է ունեցել նաև թուրքերենի հետ, ի հետևանք որի, այս լեզվում հայտնվել են թուրքական ծագման որոշ բառեր: Հարկ է նշել, որ թուրքական փոխառությունների մի մասը կարող էր լրմավրեն ներթափանցել նաև միջնորդավորված ձեւով, այսինքն հայերեն բարբառների միջոցով, որոնցում ևս առկա են այս բառերը: Այսուհանդերձ, այժմ արդեն անհնար է որոշարկել թուրքերենից կատարված փոխառությունների մեծ մասի ուղղակի կամ միջնորդավորված բնոյթը:

Իրանական լեզուներից լրմավրենում վկայված են միայն նոր պարսկերենից և բրդերենից փոխառյալ բառեր: Դասելով վերջիններիս հնյունական ձեւերը, որանց մեծ մասը լրմավրեն են մուտք գործել դասական նոր

պարսկերենից՝ ամենայն հավանականությամբ, սկսած 9–10–րդ դարերից: Նոր պարսկական ծագման բաղերը այս լեզվում հայտնվել են կամ ուղղակի, կամ միջնորդավորված փոխառության ճանապարհով: Դրանցից կարելի է նշել օրու «ապրուստ, ունեցվածք, տավար» < դաս. պր. rōzī «օրապահիկ, ապրուստ» (հմմո. ժամ. պր. rāzī), *bazax* «ափսոս, մեղր» < դաս. պր. bazah «մեղր» (հմմո. ժամ. պր. hāg. bezech), *gah / gay* «ժամանակ» < դաս. պր. gāh «ժամանակ» (հմմո. ժամ. պր. gāh) և այլն: Գնչուական բոլոր լեզուներում կամ բարբառներում պարսկերենից վերցված բաղերը հանդիսանում են փոխառյալ բարբառաշարի ամենավայր շերտը, որը հասնում է, հավանաբար, գնչուական լեզվական ընդհանրության ժամանակաշրջան, եթե՛ պրոտոգնչուերենը դեռևս չէր տրոհվել երեք հիմնական բարբառախմբի:

Լումավրենի հետ շիման մեջ գտնված իրանական մյուս լեզվից՝ բրդերենից, հաստատապես կարելի է նշել միայն լում. եօրան «քուրդ, անասնապահ, հովիկ» բարի փոխառության փաստը, որը հանգում է քրդ. երան «եղայր» բարին: Համշենի տարածքներում մինչև օրս բնակվող հայ-բոշաների գաղտնալեզվում վկայված է յան «աչք» < քրդ. ḫān «աչք» բառը:

Ոչ վաղ անցյալում տարածված լինելով հյուսիս-արևմտյան Հայաստանի (այսպես կոչված, հյուսիս-արևելյան Անտառլիայի) տարածքներում, լումավրենը որոշակի փոխառնչակցություններ է ունեցել մի կողմից՝ թուրքիայում տարածված եվրոպական գնչուների լեզվի, իսկ մյուս կողմից մերձավորարենեյան գնչուական բարբառների հետ, որի հետևանքով կատարվել են փոխադարձ փոխառություններ: Եվրոպական գնչուների լեզվից լումավրենին է անցել *laxus/laxuz* «զյուղաբնակ հայ-բոշա, նստալյաց հայ-բոշա, բոշա տղամարդ» < եվ. թթ. *laxos* «նստալյաց գնչու, քրիստոնյաց գնչու» < լուն. Յլաքոս «Վալխիայի բնակիչ, վալախական գնչու» բառը: Հավանաբար, եվրոպական գնչուների բարբառներից է փոխառյալ նաև Ակնի շրջանի հայ-բոշաների գաղտնալեզվում վկայված *k'aryi* «հավ, արադաղ» < եվ. թթ. *k(h)ayni* «հավ» (հմմո. լում. *p'antri / p'anri* «հավ») ձևը: Համշենի շրջանի մահմերական հայ-բոշաների գաղտնալեզվում վկայված են նաև եվրոպական գնչուների լեզվից վերցված հետևյալ բառերը. չ'առ «տղա» < եվ. թթ. չառ ն./հ., ցայ «ոչ բոշա» (հմմո. բնիկ կածան ն./հ.) < եվ. թթ. ցայ «քուրդ, ոչ գնչու», *jükel* «շուն» < եվ. թթ. *jükel / jükel* ն./հ. բառերը: Իր հերթին լումավրենից է փոխառյալ դարաշի անունով հայունի մերձավորարենեյան գնչուների լեզվում վկայված *klav* «յուղոտ, գեր» < լում. *k'el* «յուղ», *k'elavot* «յուղոտ, գեր» բառը:

Հայ-բոշաների գաղտնալեզվում կան որոշ բառեր որոնք ցարդ ենքակա չեն որևէ սառուցարանության: Հավանական է, որ սրանց մի մասը պետք է ունենա բնիկ ծագում:

Սկսած լումավրենի նյութն արտացոլող ամենավայր աշխատանքներից՝ հայ-բոշաների գաղտնալեզվի նմուշները զրի են առնված Արևմտյան Հայաստանի երեք շրջաններից, որմնցից առաջինը ներառում է արևմտարից արևելք ձգվող Կարինի և Կարսի շրջանները, Բասենի դաշտը, որտեղից էլ հիմնականում գաղթել են ներկայի Հայաստանի և Վրաստանի տարածքներում բնակվող հայ-բոշաները, երկրորդը իր մեջ բնդզրիւմ է Ակնի մինչև մթխատ

(Եվլոլիիա) տարածվող գրտին, և վերջապես երրորդը՝ դա Սև ծովի հարավային ափամերձ գոտին է, որն ընդգրկում է Արդվին, Արտանուճ, Շավշատ ընակավայրերը և Համշենի արևելյան հատվածները: Անշուշտ հիշյալ տարածքներից զրի առնված նյութերն ունեն ծավալային և ժամանակային որոշակի խզում, ինչը հնարավորություն չի տալիս լիարժեքորեն համեմատել դրանք, սակայն առկա նյութի համեմատությունն էլ թույլ է տալիս նկատելու, որ լումավրենը, ըստ երևույթին, բաժանված է եղել մի քանի տարածքային տարրերակների:

Այլուստ 11. Լումավրենի տարրերակները

Էրգորում	Այն	Համշեն	Թոյիստ	հայերեն
čok'i	čok'i	čok'e	յայ	աղջիկ
t'ari, t'aři	t'ahi	t'are	—	(պառավ) կին
(h)innav	čaya	čavo	յայա	տղա, մանուկ
koylav	kohraf	—	—	զող
ak'i	ak'eh	jav	—	աչք
solav	solav	jükel	—	շուն
p'antri, p'anři	k'aryi	hav	—	հավ
k'ori	—	göhre	—	ձի
xari	xari	xeri	—	էշ
ankor	ankot	inkos	—	ընկույզ
xaliv	xalip	mis	—	միս
nöl	ancin	ay	—	աղ
anlu	—	acdič	anu	ձու, հավլիթ
malav	malav	peres	malav	հաց
k'el	k'el	k'el	kül, kür	յուղ
gar	gar	düke	—	տուն
təresul, tərəsul	tələsur	—	—	եկեղեցի, քահանա

ԳԼՈՒԽ 3. ԼՈՍԱՎՐԵՆԻ ՏԵՂՎ ԳՆՉՈՒԱԿԱՆ ԼԵԶՈՒՆԵՐԻ ՇԱՐՔՈՒՄ (Ենթագլուխներ 1 – 3)


Ներկա գիտում (էջ 130–150) գնչուական լեզուների ներբարարային հնյունական և բարային զրոգաբանությունների հիման վրա փորձ է կատարվում պարզելու լումավրենի տեղը գնչուական բարբառային զանգվածի շրջանակներում: Նշված զրոգաբանությունները հանդիսանում են, թերևս, միակ հնարավոր միջոցները ներգնչուական բարբառային դասակարգման որոշակի պատկեր կազմելու համար:

Ըստ հին հնդարիական *gh*, *dh* և *bh* ձայներ շնչել բաղաձայնների գնչուական լեզուներում հետագա արտացոլման, դեռևս անցյալ դարում գնչուական լեզուները դասակարգվել են երկու բարբառախմբի, դրանք պայմանականորեն անվանելով *ben* և *rhen* խմբեր, ի նկատի ունենալով հին հնդարիական *bhaginī-* «քույր» բառում շնչել բաղաձայնի հետագա հնյունական զարգացումը՝ եվրոպական զնչուների լեզվում (ոռմանի) *rhen*, հայկական

զնչուների լեզվում թ' ու մերձավորաքելյան գնչուների բարբառներում (դոմարի) են տարբերակներով: Հարկ է նշել սակայն, որ այս տեսությունը ըննադատության չի դիմանում հենց միայն այն պատճառով, որ լումավենում հիշյալ անցումները, ամենայն հավանականությամբ, պայմանավորված են արևմտահայ բարբառների ազդեցությամբ: Այսպես՝ վաղ լումավենը, ինչպես մերձավորաքելյան գնչուական բարբառները, ըստ երևությին, ի սկզբանե կորցրել էր միայն հ. հա. ցհ-, ժհ-, նհ-բաղաձայնների շնչեղությունը դրանք արտացոլելով որպես *ց-, *ժ-, *ն-, իսկ հետագայում դրանք բարբառային հայերենի ազդեցությամբ ենթարկվել են երկրորդական շնչեղացման *ց- > կ-, *ժ- > տ-, *ն- > թ-: Սրա օգտին են խոսում լումավենում պահպանված որոշ բառեր, որոնք շրջանցել են հիշյալ հնչունական անցումները:

Գնչուական հիմնական բարբառախմբերի միջև առկա հնչունական և բառային գործարանությունների ընդհանրացման արդյունքում պարզվում է, որ լումավենը, որոշ դեպքերում մերձենալով, կամ եվրոպական գնչուների բարբառներին ուսմանին, կամ մերձավորաքելյան գնչուերենի դոմարի, այս կամ այն խոսվածքին, այսուհանդերձ, հիմնականում դրսուրում է միայն իրեն հասուլ հասկանիշներ և զարգացումներ, ուստի այս պետք է դիտարկել որպես ուսմանից և դոմարից առանձին՝ գնչուական երրորդ բարբառախումբ: Այսինքն՝ ըստ երևությին, պրոտոգնչուերենը ի սկզբանե տրոհվել է երեք առանձին բարբառախմբերի, որոնցից մեկից է սերում է հայ-բռշաների զարտնալեզուն: Զաշվի առնելով այն հանգամանքը, որ լումավենը թե լեզվական և թե աշխարհագրական տեսանկյունից, իրականում, միշանկյալ դիրք է զրադեցնում մի կողմից ուսմանի, իսկ մյուս կողմից դոմարի միշև, այս պետք է համարել «կենտրոնական գնչուական բարբառախումբ», ուսմանի և դոմարի համար օգտագործելով համապատասխանաբար «արևմտագնչուական բարբառախումբ» և «արևելագնչուական բարբառախումբ» եզրերը:

Գնչուական լեզուների բարբառային նոր դասակարգումը



արևմտագնչուական
բարբառախումբ

ուսմանի
բարբառներ

կենտրոնական
գնչուական
բարբառախումբ

լումավենի
բարբառներ

արևելագնչուական
բարբառախումբ

դոմարի բարբառներ

ՎԵՐՉԱԲԱՆ

Վերջաբանում (էջ 151–153) ամփոփում և ներկայացվում են ատենախոսության հիմնական դրույթներն ու եզրակացությունները.

1. Գործառնական առումով, լումավենը զրեթե բացառապես ունի զարտնալեզվի կամ ծածկալեզվի (արգո) կարգավիճակ. այսինքն՝ խոսդները դիմում են այս լեզվին այն դեպքերում միայն, եթե անհրաժեշտ է, որ ոչ-բռշան շնչականա, թե ինչի մասին է խոսքը: Ծնայած գործառությային նման սահմանափակությանը, այսուհանդերձ, այս աղքատիկ լեզվով կարող են պատմվել զանազան անեկդոտներ և համառոտ պատմություններ, ինչպես նաև հորինվել հիմնականում, կատակ բանաստեղծություններ:

2. Կառուցվածքային տեսանկյունից, լումավենը ներկայանում է որպես խարնակեզվի դասական օրինակ: Այն օգուլում է իր հիմքում հնդարիական ծագում ունեցող հիմնականում գնչուական բառապաշարից, որի մի զգայի մասը սերտ առնչություններ ունի Եվրոպայում ու Ասիայում տարածված գնչուական այլ լեզուների կամ բարբառների հետ, և արևմտահայերենի՝ մեծ մասամբ, Կարս բարբարի, քերականական ձեերից՝ ձեսպորելով, փաստորեն, մի յուրօրինակ լեզվական խասուրդ, որում հիմնական բառապաշարը ժառանգված է նախկին մայրենի լեզվից, իսկ քերականությունը և հնչունական համակարգը փոխառված՝ մեկ ուրիշից:

3. Ծնայած բնիկ քերականական ձեերի հիմնական մասի կորսուի և սրանց բարբառային հայերենի հիմնականում Կարնո բարբարի, համապատասխան միջոցներով համատարած փոխարինման լումավենը, այսուամենայնիվ, պահպանում է դրանց որոշ մնացուկներ, որոնք հստակ զուգահեռներ են ի հայտ բերում նաև գնչուական մյուս լեզուներում: Մասնավորապես, այս մնացուկյան ձեերից պահպանվել են նախկին պատմառականի կազմության -ան- ձևությը, ժմատական խննարիման ոն և արգելականի տա նախամասնիկները, ինչպես նաև նախկինում արական սերի -ան և իգականի -ի ցուցիչները:

4. Հայ-բռշաների զարտնալեզվի բնիկ բառապաշարում վկայված են զրեթե բոլոր խոսքի մասերը, որոնցում ամենազգայի հաստվածք կազմում են զոյլականները և բայերը: Որոշ բնիկ խոսքի մասերի բացակայությունը լրացվում է բարբառային հայերենի հիմնականում Կարնո բարբարի, համապատասխան ձեերով:

5. Բացի հնդարիական բնիկ ձեերից սերող բառապաշարից, այս լեզվում առկա են նաև հայերենից, դասական նոր պարսկերենից, ինչպես նաև թուրքերենից, քրդերենից և գնչուական հարևան լեզուներից կատարված փոխառություններ: Պատմահամեմատական հետազոտության տեսանկյունից, ոչ բնիկ բառաշերտերից առավել կարևոր են գնչուական գաղթի վաղ շրջանում կատարված իրանական փոխառությունները, որոնք, ըստ ամենայնի, առնչվում են գնչուական լեզվական ընդհանրության ժամանակաշրջանին, եթե պրոտոգնչուերենը դեռևս չէր տրոհվել երեք հիմնական բարբառախմբի: Հայերենից փոխառյալ բառերը ենթարկվել են որոշակի:

հնյունափոխությունների, որոնք վկայում են, որ վաղ լոմավրենը ունեցել է հնդարիական լեզուներին բնորոշ հնյունական համակարգ, որում, մասնավորապես, բացակայել են աստմային հպաշփականների *j, c, c'* շարքը և օ ձայնավորը:

6. Աշխարհագրական տարբեր տարածքներից գրի առնված լոմավրեն նյութերն ունեն ծավալային և ժամանակային որոշակի խզում, ինչը հնարավորություն չի տալիս լիարժեքուն համեմատել դրանք, սակայն առկա նյութի համեմատությունն էլ ի հայտ է բերում մի շարք տարբերություններ, որոնք թույլ են տալիս նկատելու, որ այս լեզուն, ըստ երևույթին, բաժանված է եղել մի քանի տարածքային-բարբառապես տարբերակների:

7. Լոմավրենի կարգի խառնավեզուները համաժամանակա վերլուծության տեսանկյունից դժվար է դասել լեզուների այս կան այն ընտանիքին կամ խմբին: Տարածմանակայա կտրվածքով, եթե համեմատության համար հիմք ընդունենք հիմնական բառամթերքը և բնիկ թերականական ձևերի աղքատիկ մնացուկները, ապա լոմավրենը պետք է տեղադրել հնդեվրոպական լեզվաբնակին նոր հնդարիական լեզուների գնչուական խմբում:

8. Գնչուական հիմնական բարբառախմբերի միջև առկա հնյունական և բառային գույքաբանությունների տեսանկյունից, լոմավրենը, որոշ դեպքերում մերձենալով կամ եվրոպական, կամ ասիական գնչուական բարբառախմբերին, այսուհենդեռ, հիմնականում դրսնորում է միայն իրեն բնորոշ հատկանիշներ և զարգացումներ, ուստի՝ այս պետք է դիտարկել որպես եվրոպական և մերձավորարևելյան գնչուերենից առանձին կանգնած երրորդ գնչուական բարբառախմբում: Հավանաբար, պրոտոգնչուերենը ի սկզբանե տրոհվել է երեք առանձին բարբառախմբերի, որոնցից մեկից է հայ-բուշների գաղտնալեզնուն: Հաշվի առնելով այն հանգամանքը, որ լոմավրենը թե լեզվական, և թե աշխարհագրական տեսանկյունից, միջանկյալ դիրք է գրադեցնում մյուս երկու գնչուական բարբառախմբերի նկատմամբ, այն պետք է համարել «կենտրոնական գնչուական բարբառախուում»՝ եվրոպական և մերձավորարևելյան գնչուների լեզուների համար օգտագործելով համապատասխանաբար «արևմտագնչուական բարբառախուում» և «արևելագնչուական բարբառախուում» եզրերը:

ՀԱՎԵԼՎԱԾՆԵՐ

Ատենափոխությանը կից՝ երկու հավելվածների տեսրով (35 էջ), ներկայացվում են դաշտային աշխատանքների ընթացքում գրի առնված հայ-բուշների գաղտնալեզնի որոշ համառու տեքստերի նմուշներ, ինչպես նաև ստուգաբանական նշումներ և լուսաբանող օրինակներ պարունակող լոմավրեն-հայերեն բառարան:

ԱՏԵՆԱԽՈԽՈՒԹՅԱՆ ԱՌԱՆՁԻ ՀԱՐՑԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՀԵՂԻՆԱԿԻ ԳԻՏԱԿԱՆ ՀՐԱՊԱՐԱԿՈՒՄՆԵՐԸ

1. Գնչուական տարրը քրդական ցեղերի մեջ (քրդերի էթնոգենեզի խորհրդիներ) – «Հրան-նամեր», Խո. 2-3(24-25), Էջ 25-26, Երևան, 1997 (նույնի առավել մանրամասն տարբերակը ուսուեքնով տե՛ս ստորև):

2. Հայ-բուշների թվարանակը և աշխարհագրական տեղաբաշխումը պատմական կտրվածքով – «Արևելը» (Խողվածների ժողովածու), Խմբ.՝ Ա. Սովորյան, Էջ 32-43, Երևան, 2001:

3. Հայ-բուշների գաղտնալեզնի ձայնավորական համակարգը և դրա ծագումը – “Orientalia” (Խողվածների ժողովածու), Խմբ.՝ Տալպյան, Խո. 1, Էջ 65-73, Երևան, 2003:

4. Ցիգանական էլեմենտ կուրդական պլատոնական պլատոնական էլեմենտում (նույնականացում) – “Իրան և Կավազ”, տոմ 1, ս. 47-50, Տեղեր, 1997:

5. The Iranian Loan-words in Lomavren, the Secret Language of the Armenian Gypsies - “Iran and the Caucasus”, vol. 6, (1-2), pp. 177-188, Leiden, 2002:

Յան Վարդան Ստեփանովիչ

ՏԱЙНЫЙ ЯЗЫК АРМЯНСКИХ ЦЫГАН
Историко-сравнительное исследование

Диссертация на соискание ученой степени кандидата филологических наук по специальности

10.02.06 “ДРЕВНИЕ И СОВРЕМЕННЫЕ ЯЗЫКИ АЗИИ (иранистика)”

Защита состоится 29 июня 2004г. в 12⁰⁰ часов, на заседании объединенного специализированного совета 019, действующего в Институте языкоznания имени Гр. Ачаряна НАН РА и Ереванском государственном университете (адрес: Ереван 375025, ул. Алека Манукяна, 1, Кафедра иранистики ЕГУ).

РЕЗЮМЕ

Представляемая диссертация посвящена синхронному и диахроническому изучению тайного языка армянских цыган – бомса, в среде которых он известен под названием ломаврен. Структурально этот реликтовый язык является классическим примером смешанного языка, который использует инвентарь оригинальной лексики индоарийского происхождения, кстати, имеющего много общего со словарным составом других цыганских языков и диалектов и грамматику, в основном, каринского (эрзрумского) диалекта армянского языка. С точки зрения функционального применения, ломаврен является секретным языком, к которому прибегают только для того, чтобы

сделать речь непонятной для не цыган. Исследование основано на полевом материале, собранном автором среди армянских цыган в Армении и Грузии.

Во “Введении” (сс. 2-25), определяется объект исследования, обсуждаются разные названия цыган в армянских диалектах, приводятся данные о географической дистрибуции и численности армянских цыган в Армении, Грузии и современной Турции. В общих чертах представляется тайный язык армянских цыган,дается подробный обзор состояния его изученности.

В первой главе – “Фонетика” (сс. 26-60), излагается подробное описание звукового состава ломаврен. Все фонемы рассматриваются как в синхронном, так и в плане их исторических соответствий.

Вторая глава – “Морфология” (сс. 61-116), посвящена анализу морфологического строя тайного языка армянских цыган. Так как в современном состоянии ломаврен почти полностью утерял исконные грамматические формы, делается акцент на идентификации и этимологизации остатков индоарийских морфем, каковыми являются основы, реликтовые показатели утерянного грамматического рода, формообразующий инфикс каузатива, остаточные именные и глагольные префиксы и суффиксы. При описании и реконструкции форм приводятся соответствующие формы родственных цыганских языков и диалектов, а также древне- и средне-индоарийский языковой материал.

В третьей главе – “Лексика и диалектные варианты” (сс. 117-129), рассматривается исконный и заимствованный словарный фонд ломаврен. Подробно обсуждаются все слои заимствованной лексики. На основании известного языкового материала, собранного в разных местностях нынешнего и прошлого обитания армянских цыган, дается общая характеристика диалектных вариантов их тайного языка.

В четвертой главе – “Место ломаврен среди цыганских языков”, на основании фонетических и лексических изоглосс делается попытка классификации цыганских диалектных групп и определения места тайного языка армянских среди родственных цыганских языков и диалектов. Вследствие этого, выясняется, что ломаврен имея ряд общих черт с одной стороны с языком европейских цыган, а с другой – с ближневосточными цыганскими диалектами, в основном, обособляется от обеих групп. Следовательно,proto-цыганский язык, вероятнее всего, изначально расчленился на три диалектные группы, продолжителями которых являются сегодняшние языки европейских, армянских и ближневосточных цыган. И географически и по внутрицыганским фонетическим и лексическим изоглоссам ломаврен занимает центральное положение в общецыганском диалектном континууме.

В “Заключении” (сс. 150-153) диссертации приводятся выводы и подводятся основные итоги работы.

“Приложения” включают некоторые образцы текстов на секретном языке армянских цыган и ломаврен-армянский словарь с иллюстративным языковым материалом и этимологическими заметками.